# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

30 հուլիսի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամ:

Բացակա էին՝ Պավել Յուգունյանը, Գեվորգ Պողոսյանը, Ալեքսանդր Խաչատուրյանը, Մելինե Գասպարյանը, Պետիկ Սարգսյանը, Մարգարիտա Հարությունյանը, Վրեժ Մամուլյանը, Հայկ Հարությունյանը, Վան Հարությունյանը

<u>**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր՝**</u> Արմեն Շմավոնյանը

<u>**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը**</u>

<u>**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը**</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 30-ի արտահերթ ութերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) «Աբովյան համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին.

2) «Խմելու ջրի խնայողություն՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման միջոցով» ծրագրին Աբովյան համայնքի մասնակցելուն և համաֆինանսավորմանը համաձայնություն տալու

մասին.

3) «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված հողատարածքների կառուցապատման պայմանագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախագծի ներկայացումից հետո զեկուցողը նշեց, որ օրակարգի հարցերն ու կից փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվել են համայնքի պաշտոնական կայքում, ուղարկվել են Ավագանու իրավասու հանձնաժողովներին: Միաժամանակ զեկուցողը հայտնեց, որ Ավագանու անդամներից շահերի բախման վերաբերյալ դիմումներ չեն ստացվել:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ՁԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ՁԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 123-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

*«ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հաստատել «Աբովյան համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Տիգրան Գեղամյանը հարց ինչեցրեց նախագծով հաստատվող ծրագրի առանձին բաղադրիչի մասին, որին զեկուցողը տվեց անհրաժեշտ պատասխան:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 124-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» ԾՐԱԳՐԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի և հիմք ընդունելով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության վարչության նախագահի գրությունը (մուտք՝ 2025 թվականի հուլիսի 23-ի N Տ-1855) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Աբովյան համայնքի մասնակցությանը «Խմելու ջրի խնայողություն՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման միջոցով» ծրագրին և դրա շրջանակներում 125 451 650 (հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ նախահաշվային արժեքով ծրագրի համաֆինանսավորմանը՝ հատկացնելով Աբովյան համայնքի բյուջեից 54 769 000 (հիսունչորս միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Տիգրան Գեղամյանը հարց հնչեցրեց նախագծով հաստատվող ծրագրի ֆինանսական առանձին ցուցանիշների՝ մասնավորապես խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով հատկացվող գումարի չափի վերաբերյալ: Զեկուցողը, ինչպես նաև նիստին ներկա գտնվող Աբովյան համայնքի ղեկավարի օգնական Մերուժան Մելիքսեթյանը բարձրացված հարցի վերաբերյալ տվեցին մանրամասն և սպառիչ տեղեկատվություն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովները տվել են դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18　　　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 125-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի, 616-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով հողամասերի կադաստրային արժեքների փոփոխությունները, հիմք ընդունելով «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Էդգար Խանզադյանի դիմումը (մուտք՝ 13.05.2025թ. N Տ-1245), համայնքի հետ կնքված վարձակալության պայմանագրերը, վարձակալի համաձայնությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի և «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև կնքված հողատարածքների կառուցապատման թվով 6 պայմանագրում վարձավճարների չափերի, պայմանագրերի ժամկետների և

պայմանագրերի առարկաների բնութագրերում փոփոխություն կատարելուն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին կետով նշված փոփոխությունները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագծի ներկայացումից հետո հանդես եկան Ավագանու «Բարգավաճ Հայաստան և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների ղեկավարները: Ինչպես Արմեն Քոսակյանն, այնպես էլ Տիգրան Գեղամյանը նշեցին, որ իրավասու մշտական հանձնաժողովում հարցի քննարկման ժամանակ առաջարկվել է նախագծի հավելվածի 3-րդ սյունակում «60.000» բառը փոխարինել «80.000» բառով: Նախագիծը քվեարկության դրվեց առաջարկված տարբերակով:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԲԱԲԱՅԱՆ
Դ. ՁԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Ա. ՄԵՂՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 126-Ա)*

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ՁԱՐՈՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՌԱՁՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ________________